Best Practice Programme ԼԳԾ

«Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը»
Եվրոպայի խորհրդի ծրագիր. Տեղական իշխանությունների կարողությունների զարգացում

Հայաստանի տեղական իշխանությունների

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԾՐԱԳԻՐ

ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ
2015

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF DENMARK
DANIDA | INTERNATIONAL DEVELOPMENT COOPERATION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ալֆոնսո Զարդի

Ժողովրդավարական կառույցների և կառավարման բաժնի ղեկավար
Ժողովրդավարության հարցերով գլխավոր փնտրողություն
Եվրոպայի խորհուրդ

Ժամանակակից կյանքի մարտահրավերները ցույց են տալիս, որ ավանդաբար ձևավորված գործընթացները կարող են բավարար չլինել ծառայությունների մատուցումը բարելավելու և քաղաքացիների գոհունակությանը հասնելու համար: Տեղական իշխանությունները կարիք ունեն ուսումնասիրելու նոր և ստեղծագործական մոտեցումներ՝ տեղական համայնքներին իրենց պլաններում և ծրագրերում ներգրավվելու համար: Կարիք կա ուսումնասիրելու ծառայությունների մատուցման նոր մոտեցումներ, փորձարկելու և զարգացնելու գործընկերության նորարարական մեթոդներ: Սա տեղական իշխանություններից պահանջում է բաց լինել նորարարությունների հանդեպ, պատրաստակամ լինել փորձը կիսելու համար և ունենալ սովորելու ցանկություն:

Եվրոպայի խորհրդի լավագույն գործելակերպի ծրագիրը, որը շարունակվում է հաջողությամբ իրականացվել մի շարք անդամ երկրներում, և որը Հայաստանում արդեն իսկ հաջողությամբ իրականացվել է 2014 թվականին, նպատակ ունի օգնել բարձրացնելու կառավարման չափանիշները, ծառայությունների մատուցումը և տեղական մակարդակում քաղաքացիների մասնակցութունը: Տեղական համայնքները հրավիրվում են մասնակցելու նորարարական և գերազանց ծառայությունների մատուցման, քաղաքացիական մասնակցության նախաձեռնությունների և փորձի բացահայտմանը, որոնց նպատակն է համայնքի սոցիալական և տնտեսական կայուն զարգացումը: Այս “լավագույն գործելակերպերը” հետագայում կտարածվեն այլ համայնքներում, որոնք կկարողանան ընդօրինակել, հարմարեցնել և կիրառել նույն փորձը. լավագույն գործելակերպից սովորելը սովորելու լավագույն գործելակերպն է: Եվրոպայի խորհրդի անունից ես խրախուսում եմ Հայաստանի համայնքներին ակտիվ հետաքրքրվածություն ցուցաբերել և մասնակցել ծրագրին: Բոլոր տեղական կառավարման մարմիններում դուք կարող եք գտնել տեղական զարգացման լավ ծրագրեր, խնայողության արդյունավետ օրինակներ կամ քաղաքացիներին ավելի որակյալ ծառայություններ մատուցելու եղանակներ: Կիսելով Ձեր փորձը, քննարկելով նորարարական լուծումնե-

ը, տեղեկացնելով սեփական նորարարական լուծումների մասին, դուք կնպաստեք Ձեր համայնքի առաջընթացին այնքան, որքան կսովորեք մեկդ մյուսից: Այսպիսով, Հայաստանի համայնքների մեծ մասը տարբեր եղանակներով կդառնան այս ծրագրի շահառուները՝ ի լրումն պաշտոնապես հաղթող ճանաչվածների, որոնք կպարգևատրվեն հատուկ միջոցառման ընթացքում: Ես քաջալերում եմ բոլոր տեղական իշխանությունների մասնակցությունը և հաջողություն եմ ցանկանում նրանց, ովքեր կներառվեն Հայաստանում կիրառվող այս նախագծում:

Էմին Երիցյան

Հայաստանի համայնքների միության նախագահ

Հարգելի բարեկամ,

Տեղական ինքնակառավարման զարգացման արդյունավետ ուղիներից մեկը լավագույն փորձի փոխանակումն ու տարածումն է: Մենք՝ միմյանցից սովորելով, միաժամանակ զարգացնում ենք մեր կարողությունները: Անցած 18 տարիներին տեղական ժողովրդավարության շարունակական զարգացումը որպես ամենօրյա նպատակ ունեցող Հայաստանի համայնքների համար փորձի փոխանակումը կրկնակի կարևոր է: Իր կազմավորման առաջին օրից «Հայաստանի համայնքների միությունը» մշտապես եղել է փորձի փոխանակման յուրահատուկ հարթակ: Ավանդական են դարձել ՀՀ կառավարության ու այլ գործընկերների հետ միասին Միության կողմից կազմակերպվող «Տարվա լավագույն համայնք» մրցանակաբաշխությունները մոտ մեկ տասնյակ անվանակարգերով:

Հայաստանում տեղական ժողովրդավարության աջակցության ԵԽ ծրագրի շրջանակներում իրականացվող «Լավագույն գործելակերպ» ծրագիրը եվրոպական լավագույն փորձը վերցնելու, մեր կարողությունները զարգացնելու լավ հնարավորություն է: Վստահաբար, լավագույն փորձի տա-

ռածումը նաև տեղական իշխանությունների, որպես հանրային կառույցների, գործունեության հանրայնացման, գնահատման ու գնահատման չափորոշիչների ձևավորման միջոց է՝ վերջիններիս գործունեությունը ավելի հաշվետու դարձնելով մեր բնակչության ու քաղաքացիական հասարակության համար:

Արաիկ Հովհաննիսյան

ՀՀ ԱԺ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ, Հայաստանի ավագանիների ասոցիացիայի նախագահ

Հայաստանի ավագանիների ասոցիացիայի և իմ անունից ողջունում եմ Եվրոպայի խորհրդի “Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը” ծրագրի մեկնարկը: Ակնկալում եմ, որ այն իրոք լուրջ ազդեցություն կունենա ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի հզորացման, տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման գործում: Կարևորում եմ, որ ծրագրի “լավագույն գործելակերպի” բաղադրիչը, որի նկարագրմանն է նվիրված սույն ուղեցույցը, լինի խիստ մասնակցային և խթանի քաղաքացիների մասնակցությունը տեղական հասարակական գործունեության մեջ, նպաստի բնակչության լայն շերտերի ներգրավմանը տեղական իշխանությունների որոշումների կայացման և համայնքային ծառայությունների մատուցման ու որակի բարձրացման գործընթացներում, նպաստի ուժեղ քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու ամրապնդմանը:

ՆԱԽԱԲԱՆ

«Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում 2014 թվականի մայիսի 27-ին Հայաստանում պաշտոնապես մեկնարկեց և հաջողությամբ անցկացվեց տեղական ինքնակառավարման ոլորտում ԵԽ առաջատար ծրագրերից մեկի՝ Լավագույն գործելակերպի ծրագրի առաջին շրջանը: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի կողմից մշակված ծրագիրը արդեն իրականացվել էր մի շարք եվրոպական երկրներում:

Լավագույն գործելակերպի ծրագիրը նպատակ ունի գտնել, հանրայնացնել և տարածել լավագույն գործելակերպերը հայկական տեղական կառավարման մարմինների շրջանում:

2014թ. համար Ղեկավար կոմիտեի կողմից հաստատվել են երեք հիմնական թեմաներ, որով 2014 թվականին ամբողջ Հայաստանից մոտ 49 համայնքներ մասնակցել են ծրագրին՝ ներկայացնելով դիմումներ լավագույն գործելակերպի համայնքի կագավիճակ ստանալու համար:

Ղեկավար կոմիտե

Այդ թեմաներն էին.

- ✓ Քաղաքացիների մասնակցության խթանում
- ✓ Նախադպրոցական և արտադպրոցական կրթության ապահովում
- ✓ Տեղական արվեստների և արհեստների զարգացում

Այս տարի ևս, Ծրագրի քարտուղարությունը հայտարարում է **2015 թվականի Լավագույն գործելակերպի ծրագրի մեկնարկը՝** առանձնացնելով հետևյալ թեմաները.

- ✓ Քաղաքացիական մասնակցություն
- ✓ Ավագանու գործելակերպ
- ✓ Համագործակցություն

Ներկայացվող ուղեցույցում մանրամասն նկարագրված է.

- ✓ լավագույն գործելակերպի ծրագրի նկարագրությունը, նպատակը, ընտրված թեմաները,
- ✓ ծրագրին դիմելու կարգը
- ✓ ընտրության գործընթացի չափանիշների բացատրությունը,
- ✓ 2014 թվականին ընտրված լավագույն ծրագրերի վերաբերյալ հակիրճ նկարագրությունը,
- ✓ հաղթող համայնքների մրցանակաբաշխության վերաբերյալ տեղեկատվությունը:

Ծրագրի իրականացման գործընթացը իրականացվում է «Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ԵԽ ծրագրի Ղեկավար կոմիտեի վերահսկողության ներքո՝ բացառապես այս ծրագրի նպատակով կազմված Ընտրող հանձնաժողովի օգնությամբ:

Ընտրող հանձնաժողովն իրենից ներկայացնում է ծրագրի Ղեկավար կոմիտեի կողմից առաջարկված և ընտրված անկախ փորձագետների խումբ և որի առաջադրանքն է գնահատել և Ղեկավար կոմիտեին առաջարկել Լավագույն գործելակերպի ծրագրի հաղթող համայնքներին:

Ծրագիրը մեկնարկում է 2015 թվականի նոյեմբերին, արդյունքները կհրապարակվեն 2016 թվականի ապրիլին:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երկրում կան տեղական իշխանություններ, որոնք իրենց գործունեության որոշ ուղղություններով ապահովում են ամենաբարձր աշխատանքային չափորոշիչները: Այդ գործելակերպը վերհանելու և այլ համայնքների հետ կիսելու դեպքում կարելի է ապահովել արդյունավետ գիտելիքի փոխանակում և բարեփոխումներ՝ առանց արտասահմանյան փորձի ներդրման: Հետևաբար, «լավագույն գործելակերպ» առաջին հերթին նշանակում է փոփոխություն և ուսուցում. այն խթանում է ձգտումը դեպի գերազանցություն և նպաստում տեղական կառավարման որակի բարելավմանն, ընդհանուր առմամբ:

Լավագույն գործելակերպը կարելի է սահմանել որպես կոնկրետ խնդրի լուծման կամ նպատակի իրականացման օպտիմալ մեթոդ, որը կարող է ընդօրինակվել և օգտագործվել այլոց կողմից:

Լավագույն գործելակերպի ծրագիրն (ԼԳԾ) իրականացվում է համակարգված մոտեցմամբ, որի շրջանակում հայտնաբերվում, գովաբանվում և այլ համայնքներին է ներկայացվում ընտրված թեմաներով առկա լավագույն փորձը: Ծրագիրը նախագծված է բացահայտելու այն տեղական իշխանություններին, որոնք իրենց գործունեության հիմնական ոլորտներում իրականացրել են հաջողված նախաձեռնություններ կամ օրինակելի նախագծեր և զգալի ազդեցություն են թողել իրենց համայնքների վրա:

Ծրագիրը մշակվել է Եվրոպայի խորհրդի տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի կողմից և հաջողությամբ իրականացվել է մի շարք եվրոպական երկրներում: Հայաստանի տեղական իշխանությունների շրջանում Լավագույն գործելակերպի ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի կողմից՝ 2014թ-ից: Ծրագրի նպատակն է հատկորոշել, հրապարակայնորեն ճանաչել և Հայաստանի տեղական իշխանությունների շրջանում տարածել առկա լավագույն փորձը:

Ակնառու լավագույն գործելակերպ ցուցադրող համայնքները մեկ տարով կարժանանան լավագույն գործելակերպ կրողի կարգավիճակին և պատասխանատվություն կստանձնեն կիսելու ունեցած փորձը տեղական իշխանությունների առավել ընդարձակ շրջանակի հետ՝ հետաքրքրված համայնքներին ներկայացված ելույթների, առանձին իրազեկման միջոցառումների, բաց դռների օրերի և ուսումնական այցերի միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ.

- ✓ բարձրացնել տեղական ինքնակառավարման որակը՝ բացահայտելով ու տարածելով տեղական իշխանությունների կողմից քաղաքացիների ներգրավման ու ծառայությունների տրամադրման նորարական և առաջավոր փորձը,
- ✓ ճանաչել և պարգևատրել տեղական ինքնակառավարման հիմնական ոլորտներում առավել արդյունավետորեն գործող մարմիններին և հնարավորություն տալ նրանց գործելու որպես գերազանցության և այլ տեղական իշխանությունների համար ուսուցման կենտրոններ,
- ✓ նպաստել հանրային ծառայությունների որակի ու ծառայությունների տրամադրման ստանդարտների բարելավմանը, քաղաքացիների մասնակցության և տեղական կառավարման ամրապնդմանը,
- ✓ խթանել նորարարությունը տեղական ինքնակառավարման պատասխանատվության ոլորտներում,
- ✓ պետական կառավարման կառույցներում շրջանառել նոր գաղափարներ՝ ՏԻՄ ոլորտում լավ կառավարման փորձի խրախուսման համար,
- ✓ նպաստել հզոր քաղաքացիական հասարակության ձևավորմանը՝ արդյունավետ, ժողովրդավարական տեղական ինքնակառավարման խթանման միջոցով:

2015Թ-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Լավագույն գործելակերպի կարգավիճակի համար 2015թ-ի դիմումները կարող են ներկայացվել հետևյալ թեմաներով.

- ✓ Քաղաքացիական մասնակցություն
- ✓ Ավագանու գործելակերպ
- ✓ Համագործակցություն

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական մասնակցությունը մի գործընթաց է, որի միջոցով քաղաքացիները որոշակի ներգործություն են ունենում իրենց կյանքի վրա անմիջականորեն ազդող հանրային որոշումների վրա:

Քաղաքացիների ներգրավումը որոշումների կայացման և ծառայություն-

ների մատուցման գործընթացներում նպաստում է առավել արդյունավետ տեղական կառավարմանը, թույլ է տալիս տեղական իշխանություններին կենտրոնանալ քաղաքացիների կարիքների վրա, օգնում է որոշումների կայացմանը, բարելավում է համայնքում հանրային փոխըմբռնումը, համագործակցությունը և գնահատումը իշխանությունների գործելակերպի վերաբերյալ, կրճատում է բախումները, ապահովում է աջակցություն նոր ծրագրերի իրականացման համար, նպաստում է բնակչության խնդիրների ու տեսակետների նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը և բաց ու թափանցիկ տեղական ինքնակառավարման կայացմանը: Մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը նպաստում է նաև բնակչության մոտ ժողովրդավարական գործընթացի նկատմամբ սեփականության զգացողության հզորացման ու պատասխանատվության բարձրացմանը:

Հետևաբար, անհրաժեշտ է ներգրավել քաղաքացիներին հասարակական կյանքում ու որոշումների կայացման գործընթացում՝ հստակ սահմանված ընթացակարգերի միջոցով, ինչպես նաև բարելավել թափանցիկությունը և ոչ գաղտնի տեղեկատվության հասանելիությունը հանրության համար:

Այն համայնքները, որոնք հիմնավոր կներակայացնեն, որ իրենց գործունեության ընթացքում կիրառել են նշված սկզբունքները, հրավիրվում են ներկայացնելու լրացված հայտաձևը «քաղաքացիական մասնակցություն» թեմայով:

2013թ-ի մայիսի 13-ին, Հայաստանը դարձավ առաջիններից մեկը եվրոպական երկրների շարքում, ով վավերացրեց Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը՝ «Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին»: 2013թ-ի հունիսի 19-ին, Հայաստանի Հանրապետության ազգային ժողովն ընդունեց ոլորտը կարգավորող օրենքում համապատասխան լրացում՝ տեղական մակարդակում քաղաքացիների մասնակցությունն ապահովելու նպատակով:

Ներկայացվող արդյունքների **օրինակներ**.

- ✓ քաղաքացիների մասնակցության, համագործակցության հաջողված օրինակներ,
- ✓ համապատասխան խնդիրների վերաբերյալ քաղաքացիների կարծիքը վերհանող ուսումնասիրություններ,

- ✓ քաղաքացիական նախաձեռնության միջոցով համայնքի ավագանու օրակարգ հարցեր ներառելու գործընթաց,
- ✓ խորհրդակցական մարմինների ստեղծում և արդյունավետ գործունեություն,
- ✓ որոշումների կայացմանը բնակչության տարբեր խմբերի (տղամարդիկ, կանայք, երիտասարդներ, տարեցներ) ներգրավում,
- ✓ խորհրդակցական գործընթացներ, քաղաքացիների կողմից սահմանված առաջնահերթ ոլորտներում տեսանելի արդյունքներ,
- ✓ էական հանրային խնդիրների շուրջ հանրային իրազեկման ծրագրեր,
- ✓ պետիցիաների և այլ գործիքների կիրառում:

2. ԱՎԱԳԱՆՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

Համայնքի ավագանին և համայնքի ղեկավարն իր աշխատակազմով, հանդիսանում են համայնքի սեփականության նկատմամբ բնակչության կողմից իր իրավունքների իրականացման գլխավոր գործող սուբյեկտները: Համայնքի ավագանին կարևորագույն ներկայացուցչական մարմին է, որը ձևավորվում է ուղղակի ընտրությունների միջոցով՝ համայնքի բնակչության կողմից:

Ավագանու անդամը, որպես համայնքային քաղաքականություն ձևավորող, մշակում է համայնքի զարգացման ուղղությունները և նախաձեռնում է համայնքի կարևորագույն ծրագրերի և ծառայությունների իրականացումը:

Համայնքի հեռանկարային նպատակների սահմանման և ծրագրերի մշակման գործում տեղական իշխանությունների՝ համայնքի ղեկավարի և ավագանու պարտադիր լիազորություններից մեկը համայնքի զարգացման քաղաքականության ձևավորումն է: Իսկ արդյունավետ քաղաքականության ձևավորումը ենթադրում է քաղաքացիների ակտիվ ներգրավումը այդ գործընթացում: Ավագանիները, որոնք սերտորեն համագործակցում են ընտրողների հետ, ձեռք են բերում նրանց վստահությունն ու աջակցությունը: Ավագանու անդամները, քաջատեղյակ լինելով համայնքում տիրող իրավիճակին, ի պաշտոնե իրավասու են ավագանուն և համայնքի ղեկավարի աշխատակազմին ներկայացնել համայնքի խնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ: Ավագանու անդամները, ավագանու՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում, ներկայացնում են առաջար-

կություններ համայնքային բյուջեի նախագծում, իրականացնում են բյուջեի ծախսերի վերահսկողություն և արդյունքում ներկայացնում առաջարկություններ: Աշխատանքներ են իրականացնում իրենց իսկ նախաձեռնությամբ ստեղծված մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներում:

Տեղական ինքնակառավարման սկզբունքները Եվրոպայի խորհրդի անդամ երկրների համար հիմնականում սահմանված են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում: Խարտիան հիմնված է այն կանխավարկածի վրա, որ արդար ընտրություններով ձևավորված ՏԻՄ-երը, ունենալով օրենքով իրենց վերապահված համապատասխան լիազորություններ և ավելի մոտ գտնվելով բնակչությանը, կարող են այնպիսի գործունեություն ծավալել և ծառայություններ մատուցել, որոնք առավել արդյունավետ են և բնակչության կարիքները հաշվի առնող:

Այն բոլոր համայնքները, որոնք կներկայացնեն փաստեր, որ ավագանու գործելակերպի արդյունքում դրական փոփոխություններ են արձանագրվել իրենց համայնքում կամ բարձրացել է ավագանու աշխատանքների արդյունավետությունը՝ հրավիրվում են ներկայացնելու լրացված հայտաձևը «ավագանու գործելակերպ» թեմայով:

Ներկայացվող արդյունքների **օրինակներ**.

- ✓ ավագանու որոշումները, որոնք հանգեցրել են համայնքում իրավիճակի կամ մտածելակերպի դրական փոփոխության,
- ✓ ավագանու մշտական և ժամանակավոր հանձնաժողովների գործունեության կազմակերպման դրական փորձը,
- ✓ ավագանու կողմից իրականացված միջոցառումներ, որոնք ուղղված են եղել բյուջեի համալրմանն ու նպատակային օգտագործմանը,
- ✓ ավագանու նիստեր, որոնք հրավիրվել են համայնքի բնակիչների առաջարկության հիման վրա, և բարձրացված հարցերը ստացել են դրական լուծում,
- ✓ համայնքային բյուջեի ծախսերի վերահսկողություն և արդյունքում առաջարկությունների ներկայացում,
- ✓ ավագանու անդամի կողմից բյուջեի նախագծում առաջարկության ներկայացում և ընդգրկում:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքների բնակիչներին մատուցվող ծառայությունների բարելավման և արդյունավետ տեղական ինքնակառավարում իրականացնելու համար կարևոր է համագործակցությունը ինչպես համայնքների միջև, այնպես էլ արտաքին գործընկերների հետ: Համայնքային համագործակցության համար մեծ նշանակություն ունի ընդհանուր նպատակների սահմանումն ու համատեղ համայնքային խնդիրների լուծման անհրաժեշտության և առավելությունների գիտակցումը: Համայնքային համագործակցությունը կարող է իրականացվել ինչպես ինստիտուցիոնալ հիմքեր ստեղծելով և անդամակցելով, այնպես էլ որոշակի խնդրի շուրջ որոշակի ժամանակահատվածում միավորվելով՝ ի նպաստ համայնքային խնդիրների լուծման և համայնքների բնակիչներին առավել նպատակային ծառայությունների մատուցման: Մեծ նշանակություն ունի համայնքների միջև փորձի փոխանակումն ու նոր գաղափարների ներդնումը:

Կարևոր է նաև համագործակցությունը քաղաքացիական հասարակության, բիզնես կառույցների և միջազգային կազմակերպությունների հետ: Համագործակցությունը նշված կազմակերպությունների հետ կարող է նպաստել հասցեական և առավել մատչելի ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև լրացուցիչ միջոցների ներգրավմանը: Ցանկացած արդյունավետ համագործակցություն և գործընկերություն ենթադրում է կողմերի միջև վստահության հաստատում, բարի կամքի արտահայտում և սահմանված կանոնների փոխադարձ պահպանում:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱ. Հոդված 10-ը սահմանում է Տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքի շրջանակներում իրենց լիազորությունները իրականացնելիս համագործակցելու իրավունքը, այդ թվում՝ այլ պետությունների համանման մարմինների հետ:

Այն բոլոր համայնքները, որոնք կներկայացնեն փաստեր, որ համագործակցության արդյունքում դրական և կայուն փոփոխություններ են արձանագրվել իրենց համայնքում՝ հրավիրվում են ներկայացնելու լրացված հայտաձևը «համագործակցություն» թեմայով:

Ներկայացվող արդյունքների **օրինակներ**.

- ✓ համագործակցության շրջանակներում ծառայությունների մատուցման որակի բարելավում,

- ✓ համայնք-համայնք համագործակցության, միջոցների համատեղ ներդրման և խնդրի համատեղ լուծման դրական փորձ,
- ✓ բիզնեսի ներգրավման, լրացուցիչ ֆինանսների ներգրավման օրինակներ,
- ✓ այլ պետությունների համայնքների հետ արդյունավետ համագործակցության լավագույն օրինակներ,
- ✓ համագործակցություն քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, սոցիալական համագործակցության հաջողված փորձ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Լավագույն գործելակերպի կարգավիճակին դիմելու համար ունեցած առաջադեմ փորձը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

- ✓ **Համարժեքություն՝** տվյալ նախաձեռնության միջոցով համայնքում որևէ անհրաժեշտ, կարևոր խնդիր է լուծվել:
- ✓ **Արդյունավետություն՝**գործողությունները ողջամիտ են ծախսային տեսանկյունից:
- ✓ **Նորարարություն՝** բացահայտվել և կիրառվել է խնդրի լուծման նոր, ստեղծագործական մոտեցում:
- ✓ **Ազդեցություն՝** գրանցվել են գործառնական և հստակ գնահատելի արդյունքներ:
- ✓ **Կենսունակություն՝** նախաձեռնությունն ունի երկարաժամկետ և կայուն զարգացման հեռանկար:
- ✓ **Կրկնելիություն՝** նախաձեռնությունը կարող է իրականացվել նաև այլ համայնքներում:

Տեղական իշխանությունները պետք է ներկայացնեն նշված երեք թեմաներից մեկով իրենց գործելակերպի գերազանցությունը՝ ապահովելով համապատասխանություն վերոնշյալ չափանիշներին և հաստատելով իրենց ցանկությունը ունեցած փորձը կիսելու այլ համայնքների հետ:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հայաստանի Հանրապետության բոլոր ՏԻՄ-երը հրավիրված են դիմելու լավագույն գործելակերպի կարգավիճակ ստանալու համար՝ վերոնշյալ այն թեմաներով, որոնցում սեփական աշխատանքը կարող են գնահատել արդյունավետ՝ ըստ այս ուղեցույցով սահմանված չափանիշների:

Մրցույթին մասնակցող բոլոր համայնքները պետք է լրացնեն սույն ուղեցույցում ներդրված հայտադիմումի ձևը, և լրացված հայտաձևը ուղարկեն Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ, մինչև **2016թ-ի փետրվարի 5-ը:**

Հայտադիմումները պետք է ներկայացվեն բացառապես այն անձանց կողմից, ովքեր իրավասու են տվյալ համայնքը ներկայացնելու:

ՏԻՄ-երը կարող են դիմել անսահմանափակ քանակի թեմաներով (այսինքն մեկ համայնքը իրավասու է դիմելու մի քանի թեմաներով լավագույն գործելակերպի կարգավիճակ ստանալու համար), սակայն յուրաքանչյուր թեմայով անհրաժեշտ է ներկայացնել առանձին հայտադիմում:

Լավագույն գործելակերպի կարգավիճակին հավակնելու համար գործելակերպը պետք է կիրարկված լինի **2014-2015թթ**. ընթացքում:

ԾՐԱԳՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լավագույն գործելակերպի ծրագրին դիմելու առավելություններից են.

- ✓ ընթացիկ կատարողականի վերանայման հնարավորությունը,
- ✓ կատարված աշխատանքի վերաբերյալ գնահատական ստանալու հնարավորությունը,
- ✓ տեղական մակարդակում ձեռք բերված հաջողության հրապարակայնության ու պաշտոնական կարգավիճակի ապահովումը,
- ✓ հայաստանյան այլ համայնքների հետ փորձի փոխանակումը:

Մենք հավատացած ենք, որ ծրագիրը կհանգի բազմաթիվ արժեքավոր լավագույն գործելակերպի օրինակների բացահայտմանը, որոնք արժանի կլինեն տարածման ազգային և միջազգային մակարդակներում: Հետևաբար, լավագույն գործելակերպի կարգավիճակին արժանացած համայնքների պարգևատրման հիմնական նպատակն է ապահովել իրենց իսկ աշխատանքի գնահատականը և աջակցությունը՝ լավագույն փորձը այլ համայնքների, մասնագետների ու քաղաքացիների հետ կիսելու գործում:

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրության գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծվել է Ընտրող հանձնաժողով:

Ընտրող հանձնաժողովն իրենից ներկայացնում է ծրագրի Ղեկավար կոմիտեի կողմից առաջարկված և ընտրված անկախ փորձագետների խումբ: Ընտրող հանձնաժողովի առաջադրանքն է գնահատել և Ղեկավար կոմիտեին առաջարկել Լավագույն գործելակերպի ծրագրի հաղթող համայնքներին:

Ընտրող հանձնաժողովը տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայությունների տրամադրման ոլորտի անկախ փորձագետների խումբ է: Ընտրող հանձնաժողովի անդամներն առաջադրվել ու ընտրվել են ԵԽ ծրագրի Ղեկավար կոմիտեի կողմից: Հանձնաժողովի առաջադրանքն է գնահատել և Ղեկավար կոմիտեին առաջարկել լավագույն գործելակերպի մրցույթի հաղթողներին՝

- ✓ կազմելով փոքր թվով դիմորդ համայնքների վերջնացանկ, որոնց կարող է շնորհվել լավագույն գործելակերպի կարգավիճակ՝ գրավոր ապացույցների և փաստաթղթերի հիման վրա,
- ✓ կատարելով փաստահավաք այցելություններ վերջնացանկում ընդգրկված համայնքներ,

Ընտրող հանձնաժողովի աշխատանքային հանդիպում

- ✓ *մասնակցելով վերհանված լավագույն գործելակերպի տարածման մեխանիզմների մշակմանը:*

ԾՐԱԳՐԻՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ.

- ✓ Ծրագրի քարտուղարությունը Երևանում և Ստրասբուրգում
- ✓ Եվրոպայի խորհրդի փորձագետը

Գնահատման ձևաթղթում նկարագրված չափանիշների հիման վրա կատարված հայտադիմումների գնահատման արդյունքներից ելնելով՝ Ընտրող հանձնաժողովը, հետագա գնահատման նպատակով, կմշակի մոտ 12 համայնքների վերջնացանկ: 2016թ-ի **մարտ-ապրիլ** ամիսներին ծրագրի Ընտրող հանձնաժողովի ներկայացուցիչները կայցելեն վերջնացանկում ընդգրկված համայնքներ՝ տեղում ծանոթանալու լավագույն գործելակերպի կիրառմանը և գնահատելու համապատասխան փաստաթղթերը:

Վերջնացանկում ընդգրկված հայտադիմումների ուսումնասիրության և փաստահավաք այցելությունների եզրակացության հիման վրա, հանձնաժողովը կընտրի 6 համայնքներ (յուրաքանչյուր թեմայով երկու համայնք, որոնցից մեկը՝ մինչև 15000, իսկ մյուսը՝ 15000-ից ավելի բնակիչ ունեցող), ում կերաշխավորի շնորհել «լավագույն գործելակերպի կարգավիճակ»՝ ըստ համապատասխան թեմաների: 6 հաղթող համայնքների վերաբերյալ որոշումը կհաստատվի ԵԽ ծրագրի Ղեկավար կոմիտեի կողմից՝ ապրիլ ամսվա վեջին:

Լավագույն գործելակերպի կարգավիճակին դիմած բոլոր համայնքները կծանուցվեն արդյունքների վերաբերյալ ապրիլ ամսվա վերջին և կհրավիրվեն մասնակցելու **ծրագրի մրցանակաբաշխության արարողությանը**:

Լավագույն գործելակերպի կարգավիճակին արժանացած համայնքները կհայտարարվեն մրցանակաբաշխության արարողության ընթացքում՝ ՀՀ կառավարության, Եվրոպայի խորհրդի, ԵԽ ծրագրի Ղեկավար կոմիտեի անդամների, տեղական իշխանությունների ու լավագույն գործելակերպը անձամբ ապահոված համայնքապետարանների աշխատակիցների, ՏԻՄ ասոցիացիաների, ծրագրին աջակցող միջազգային կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայությամբ:

Լավագույն գործելակերպի ծրագրի հաղթողները կստանան խրախուսական մրցանակներ: Վերջնացանկում ընդգրկված մյուս համայնքները կստանան լավագույն գործելակերպի հավաստագրեր:

Արարողությունը տեղի կունենա 2016թ-ին և նշանակալի հնարավորություն կընձեռի տեղական իշխանություններին՝ իրենց ձեռքբերումների վերաբերյալ հանրությանը իրազեկելու և լրատվամիջոցների ու հանրության ուշադրությունը գրավելու տեսանկյունից:

Եթե ցանկանում եք մասնակցել
Լավագույն գործելակերպի ծրագրին,
ապա լրացված հայտադիմումը ուղարկեք ստորև նշված
հասցեով կամ էլ. փոստով
մինչև 2016թ-ի փետրվարի 5-ը

Հայտաձևի էլեկտրոնային տարբերակը առցանց հասանելի է հետևյալ կայքում՝ http://www.coe.int/hy/web/yerevan/support-to-consolidating-local-democracy-in-armenia

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝
Ծրագրի ղեկավար ***Վիկտորյա Օհանյանին՝ 041 440954*** կամ
Ծրագրի փորձագետ ***Նունե Պեպանյանին՝ 091 497491***
Հասցե՝ Երևան. Եվրոպայի խորհրդի գրասենյակ՝
Էրեբունի պլազա, 6ոդ հարկ, 611 սենյակ
Վ. Սարգսյան փ. 26/1շ., Երևան 0010, ՀՀ
Էլ-փոստ՝ **localdemocracy.armenia@coe.int**

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Լավագույն գործելակերպի կարգավիճակին արժանացած համայնքները իրենց փորձը տարածելու բազմաթիվ հնարավորություններ կստանան: Տարածման միջոցառումները մասամբ կախված կլինեն այլ տեղական իշխանությունների ուսուցման, խորհրդատվական ու տեղեկատվական աջակցության պահանջներից, ինչպես նաև լավագույն գործելակերպն իրականացրած տեղական իշխանության կարողություններից և ցանկությունից:

Յուրաքանչյուր լավագույն գործելակերպի կարգավիճակին արժանացած համայնք աջակցություն կստանա լավագույն գործելակերպի տարածման միջոցառումների կազմակերպման գործում: Այդ միջոցառումները ինտենսիվ ուսուցման հնարավորություն կընձեռեն ինչպես հյուրընկալվող, այնպես էլ՝ ընդունող ՏԻՄ-երին, և հարթակ կստեղծեն կարծիքների ու

տեղեկատվության ազատ փոխանակման համար: Այցելուները հնարավորություն կունենան կիրառել նոր մտքերն ու մոտեցումները վերադառնալով իրենց համայնքներ: Ընդունող կողմը նույնպես օգուտներ կքաղի այցելուների արձագանքից ու գնահատականից: Տարածման միջոցառումները կընդգրկեն նաև առցանց հրապարակումներ և հանրամատչելի նախաձեռնություններ:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԾՐԱԳՐԻ 2014 Թ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տեղական ինքնակառավարման բարեփոխումների փորձագիտական կենտրոնի կողմից մշակված լավագույն գործելակերպի ծրագիրը Հայաստանում անց էր կացվում առաջին անգամ՝ պաշտոնապես մեկնարկելով 2014թ. մայիսի 27-ին:

Լավագույն գործելակերպի ծրագիրը նպատակ ուներ գտնել, հանրայնացնել և տարածել լավագույն գործելակերպերը հայկական տեղական իշխանությունների շրջանում: 2014թ.-ի համար Ղեկավար կոմիտեն հաստատել էր երեք հիմնական թեմաներ, որոնց շրջանակում դիմումներ էին ներկայացրել ՀՀ 49 համայնքներ ՝ լավագույն գործելակերպով համայնքի կարգավիճակի համար: Այդ թեմաներն էին.

- ✓ Քաղաքացիների մասնակցության խթանում
- ✓ Նախադպրոցական և արտադպրոցական կրթության ապահովում
- ✓ Տեղական արվեստների և արհեստների զարգացում

Լավագույն գործելակերպի ծրագրի 2014 թվականի հաղթող համայնքներ

Ստորև ներկայացնում ենք 2014 թվականին հաղթողներին՝ ըստ թեմաների.

Քաղաքացիների մասնակցության խթանում - Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք և Վայոց Ձորի մարզի Գոմք համայնք

Նոր Երզնկա – Նոր Երզնկայում համայնքի ավագանու առաջարկությամբ և համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ իրականացվել է միջոցառում՝ ուղղված հատկապես գյուղի երիտասարդների շրջանում տեղական ինքնակառավարման գործընթացի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը և որոշումների կայացմանը իրական մասնակից դառնալուն: Դպրոցի 7-12-րդ դասարաններում անց է կացվել «Տեղական ինքնակառավարման մարմինների օր», աշակերտների կողմից նրանցից ընտրվել են համայնքի ղեկավար և ավագանի: Ընտրված աշակերտական ՏԻՄ-ը մեկ օր կառավարել է համայնքը և կայացրել մի շարք որոշումներ, որոնք այնուհետև իրական ավագանու կողմից ընդգրկվել են համայնքի զարգացման քառամյա ծրագրում և կյանքի են կոչվել: Մասնավորապես, ասֆալտապատվել է 700գծմ ճանապարհ, ձեռք է բերվել գույք մշակույթի տան և մանկապարտեզի համար, վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հանդիսությունների տանը:

Երիտասարդները, զգալով, որ իրենց ձայնը լսելի է համայնքում, սկսել են ակտիվորեն մասնակցել քննարկումների, նախաձեռնություններ ներկայացնել՝ ակտիվ ներգրավվելով համայնքի կյանքին վերաբերող որոշումների կայացմանը: Այս տրամադրվածությունը սկսել է փոխանցվել նաև համայնքի չափահաս բնակիչներին: Գյուղում ձևավորվում է տեղական ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության, բոլոր կարևոր հարցերը նրանց հետ քննարկելով՝ լուծելու կայուն մշակույթ:

Գոմք – Գոմքում գյուղապետի ջանքերով միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներդրումները (սեմինարները, դասընթացները և այլն) նպատակադրված օգտագործվել են համայնքի ողջ բնակչության համախմբման համար, որպեսզի վերջինս կարողանա հնարավորինս մեծ օգուտ քաղել ստացված գիտելիքներից և կայուն հիմքերի վրա դնի համայնքի առաջնահերթ խնդիրների լուծումը՝ ողջ բնակչության համատեղ ջանքերով: Համայնքի միավորման գործում մեծ դեր են խաղացել համայնքային ակտիվ խմբերը (ՀԱԽ) և համայնքային երիտասարդական նախաձեռնությունների ակումբը (ՀԵՆԱ-ն), որոնք բարձրացնում և համայնքային ժողովներների քննարկմանն են ներկայացնում համայնքի համար տվյալ ժամանակահատվածում կենսական

խնդիրներն ու հարցերը: Արդյունքում առավել ակտիվացել է նաև համայնքի ավագանու գործունեությունը: Գոմքում կայուն հիմքերի վրա են դրվել ֆինանսական միջոցների հայթայթումը /ֆանդռեյզինգը/՝ որպես համայնքի բնակչության կողմից ընտրված խնդիրների լուծման ճանապարհ:

Արդյունքում, համայնքում վերջին երկու տարիների ընթացքում, լուծվել են հետևյալ խնդիրները. կառուցվել է երիտասարդական խաղահրապարակ, գործում է ցերեկային մանկապարտեզ, հիմնադրվել է կանանց կոոպերատիվ իր սառնարանային և ջերմոցային տնտեսություններով, կարի արտադրամասով և չիրանոցով: Ստեղծվել է մոտ 70 նոր աշխատատեղ:

Համայնքի բնակչությունը ներկայումս վստահում է ՏԻՄ-երին, քանի որ որոշումների կայացման և կենսագործման գործընթացը թափանցիկ է, առաջնահերթությունների սահմանման և ֆինանսական խնդիրների լուծման մեջ բնակչությունն ուղղակիորեն մասնակցում է, արդյունքում աճել են բյուջեի մուտքերը, որովհետև վստահող և ավելի վճարունակ բնակչությունն ավելի բարեխիղճ է կատարում իր հարկային պարտավորությունները:

Նախադպրոցական և արտադպրոցական կրթություն- Տավուշի մարզի Գանձաքար համայնք և Կոտայքի մարզի Զորավան համայնք

Գանձաքար – Գանձաքարում երեխաները կարիք և ցանկություն ունեին արտադպրոցական կրթության, սակայն գյուղում նման հնարավորությունների իսպառ բացակայության պայմաններում ստիպված էին երաժշտական կամ սպորտային խմբակներ հաճախելու համար հասնել Իջևան: Գանձաքարում բնակվող համապատասխան մասնագետները ևս աշխատում էին Իջևանում: ՏԻՄ-ի նախաձեռնությամբ և բանակցությունների արդյունքում երաժշտության ուսուցիչը տեղափոխվել է գյուղ: ՏԻՄ նախաձեռնությամբ և միջոցներով վերանորոգվել է մշակույթի տան մեկ սենյակ և հատկացվել երաժշտական խմբակին: Երաժշտական խմբակ հաճախող երեխաների թիվը հասել է 35-ի, նույն սենյակում սկսել են գործել քանոնի, դհոլի և պարի խմբակներ: Կիրառված գործելակերպի արդյունքում Գանձաքարում սկսել է կազմակերպվել արտադպրոցական կրթություն – ծառայություն, որը մինչ այդ անհասանելի է եղել գանձաքարցիներին: Կարևոր է, որ երաժշտական և պարի խմբակները աշխատում են ինքնածախսածածկման սկզբունքով – ծնողները, որոնք այլևս ստիպված չեն տանել երեխաներին Իջևան, վճարում են խմբակների համար, ինչից ձևավորվում են աղբյուրներ դասատուներին վճարելու և այլ ծախսեր հոգալու համար:

Զորավան – Յուրահատուկ նախաձեռնություն է Զորավանի ցերեկային

կենտրոնը, որը գործում է 2013թ.-ի նոյեմբերից: Կիրառված գործելակերպի նպատակն էր աջակցել սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին՝ հոգալով նրանց սննդի, կրթության և դաստիարակության կարիքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղում կային երկկողմանի, միակողմանի ծնողազուրկ երեխաներ և երեխաներ, որոնց ծնողները արտագնա աշխատանքի էին Հայաստանից դուրս, այդ երեխաների արտադպրոցական ժամանցը դարձել էր մեծ խնդիր համայնքի համար:

Գյուղի դպրոցի կառավարման խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, և ՏԻՄ-ի աջակցությամբ ընտրվել են 38 երեխաներ առավել խոցելի ընտանիքներից, որոնք սկսել են հաճախել Ցերեկային կենտրոն: Կենտրոնում իրականացվում է դպրոցում դասավանդվող առարկաների դասապատրաստում, սոցիալական ծառայություն՝ ծնողների կամ խնամողների հետ անհատական հանդիպումներ, հոգեբանական աջակցություն, հոգևոր-մշակութային արժեքների ուսուցում, սպորտային խաղերի կազմակերպում, տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում, վարվեցողության հիմունքների ուսուցում, իրազեկում մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներին, ազատություններին և սահմանադրական պարտականություններին, հայրենասիրական դաստիարակություն: Ցերեկային կենտրոնի գաղափարը կյանքի կոչելու համար համայնքը համագործակցում է հասարակական կազմակերպության հետ: Գյուղի բնակիչներից 21 կամավորականներ հնարավոր են դարձնում Ցերեկային կենտրոնի աշխատանքները:

Գործելակերպի արդյունքում բարելավվել է երեխաների հաճախելիությունը դպրոց, հարաբերություններն ընտանիքում, վարքը: Հարևան համայնքների հետ աշխատանքներ են տարվում այս գործելակերպը նաև իրենց մոտ կիրառելու ուղղությամբ:

Տեղական արվեստների և արհեստների զարգացում - Վայոց Ձորի մարզի Գետափ համայնք և Արարատի մարզի Ուրցաձոր համայնք

Գետափ – Գետափում համայնքի բյուջեի միջոցների ծախսման առաջնահերթությունները սահմանելու արդյունքում, այդ թվում՝ հարկային ապառքների հաշվին, բնակչության ակտիվ մասնակցությամբ վերանորոգվել և վերազինվել է մշակույթի տունը, որտեղ սկսել են գործել դհոլի, դուդուկի, շվիի խմբեր և ազգագրական պարերի խմբեր – Ձմրուխտ պարային համույթ: Համույթն ունի մեծ հաջողություններ, շահել է բազում մրցանակներ և հյուրախաղերով շրջում է Հայաստանի տարբեր համայնք-

ներով: Պարային համույթի համար տարազներ կարելուն օժանդակում են համայնքի շնորհալի մայրերը: Երեխաները ստանում են գեղագիտական կրթություն, ապրում ակտիվ մշակութային կյանքով, համայնքում պահպանվում և զարգանում են ազգային պարի և երաժշտական գործիքների ավանդույթները, ինչի արդյունքում համայնքը ձեռք է բերում նաև զբոսաշրջության զարգացման ներուժ: Մշակույթի տան դահլիճում ամիսը առնվազն 4 անգամ կազմակերպվում են մշակութային միջոցառումներ, որոնց մասնակցում են համայնքի 800 բնակիչներ:

Պետք է նշել, որ թեև գործելակերպի իրականացմանը ֆինանսական աջակցություն են ցույց տվել միջազգային կազմակերպությունները, դա արվել է միայն համայնքի կողմից էական ներդրում անելու պայմանով, և համայնքի կողմից այդ ներդրումը դրսևորվել է թե՛ տեղական բյուջեի սուղ միջոցներից արված էական հատկացմամբ, թե տեղական գործարարների աջակցությամբ և թե՛ վերանորոգման բոլոր աշխատանքներին համայնքի բնակչությունից կամավորների զգալի մասնակցությամբ:

Ուրցաձոր – Համայնքի զարգացման երկարաժամկետ ռազմավարական ոլորտներից է համարվել տուրիզմը, և տուրիզմը խրախուսելու նպատակով համայնքում ջանքերն ուղղվել են տեղական արհեստների և արվեստների զարգացման և ցուցադրման ուղղությամբ: Հարկ է նշել, որ երիտասարդները մեծ դեր են խաղացել այս գործընթացում՝ դպրոցի ավագ դասարաններում գրելով «Ինչպիսին եմ ուզում տեսնել իմ գյուղը» թեմայով շարադրություն: Ստացված տեղեկատվությունը հաշվի առնելով՝ 2010թ.

Ձմրուխտ պարային համույթ

վերանորոգվել է մշակույթի տունը, որտեղ բացվել են մի շարք խմբակ ներ, այդ թվում՝ գոբելեն, ազգային երգ ու պար, ժող. գործիքներ, կար ու ձև: Համայնքի ներդրումը եղել է թե՛ ֆինանսական, թե՛ կամավորական աշխատանքների միջոցով: Ֆինանսավորում դրսից համայնքը հայթայթել է ծրագրված՝ միայն ըստ պլանավորված առաջնահերթության, և ողջ օժանդակությունն ուղղել է մշակութային տան խմբակների լիարժեք գործելու և տեղական արվեստներով ու արհեստներով զբաղվող երիտասարդ սերունդ կրթելու խնդրի լուծմանը՝ զբոսաշրջության զարգացման համար կայուն հիմքեր ստեղծելու նպատակով: Շուրջ 130 երեխաներ ներկայումս մասնակցում են խմբակներին: Համայնքում շեշտակի աճել է հետաքրքրվածությունը տեղական արվեստների և արհեստների հանդեպ, համայնքի բնակչության մեծամասնությունը գիտակցում է այս ճյուղի հեռանկարները և համագործակցում է ՏԻՄի հետ՝ առաջացող խնդիրները լուծելու համար: Համայնքը հաջողությամբ վաճառում է զբոսաշրջիկներին և հյուրերին մշակույթի տան սաների աշխատանքի արդյունքը, որն ուղղվում է նոր նյութեր ձեռք բերելուն և ծածկում է խմբակների գործունեության հետ կապված այլ ծախսեր:

Այս ամենի արդյունքում համայնքում սկսում է զարգանալ զբոսաշրջությունը: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում փառատոններ կազմակերպելու և B&B-ներ բացելու ուղղությամբ: Համայնքի բնակիչների զգալի մաս զբաղված է տեղական արվեստների և արհեստների բնագավառում:

Ծրագիրը պատրաստել է հաղթող համայնքների նվաճումների վերաբերյալ կարճ փաստագրական ֆիլմ, որը լավ ելակետ է հետագա քայլերի համար՝ ուղղված լավագույն գործելակերպների խթանմանն ու տարածմանը Հայաստանի համայնքներում:

Ֆիլմը դիտելու և ծրագրի ամբողջ ընթացքին ծանոթանալու համար կարող եք այցելել Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի պաշտոնական կայք հետևյալ հղումով. http://www.coe.int/hy/web/yerevan/support-to-consolidating-local-democracy-in-armenia